

Այսպիսի դառն, դաժան օրերում,  
 երբ գաղափարի, ոգու անունով  
 Ջաղրելի մարդիկ հանդէս են ելնում  
 եւ իրենց դժուծ, ցած հաշիւներով  
 Խաբում են թշուառ ամբօխին, խաբում,  
 ե՛ւ խիղճ ու ամօթ, թռիչք անձնուէր,  
 ե՛ւ սրբազան վիշտ, այրող արցունքներ՝  
 Բոլորը ծաղրած, ոտի տակ տռած,  
 Ստոր գաճաճն է լիբբ յաղթանակում,—  
 Իմ մաքուր ոգի, տառապած ոգի,  
 Մի յուսահատուի, երբէք մի լքի.  
 Աղնիւ, սուրբ գործը չի մեռնում երբէք.  
 Ճշմարիտն է ուժ, անկեղծն է հօր,  
 եւ ժողովրդի ցաւերի համար  
 Տոչորուն ոգին ամբօխից մի օր  
 Կը գնահատուի, գիտեմ, անպատճառ.  
 եւ նենգաւորի ճակատը լկտի  
 Թուրք կ'ընդունէ նշաւակութեան:  
 ...Գնա՛, իմ ոգի, սլացիր անշեղ  
 Սուրբ ճշմարտութեան ուղին վեհութեան.  
 Սրով հրեղէն և խօսքով ահեղ  
 Ջախիր, ջախջախիր խոչընդոտներին.  
 եւ մի կարեկցիր, և մի յետ նայիր.—  
 Դո՛ւ հաւատում ես ոգուն և լոյսին,  
 Դո՛ւ հաւատում ես և՛ ճշմարտութեան,  
 ե՛ւ գեղեցկութեան վեհ յաղթանակին.  
 Արշաւէ, թռիր առանջ, անյողդողդ,  
 եւ թող քայլերդ, թռիչքդ դառնան  
 Անսայթմք ու կո՛ւռ երկրում և երկնում.  
 Սլացիր, հասիր կատարելութեան,  
 եւ մեռիր Աստծու ձեռքերի վերան...

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ